Ա Ռ Ա Ր Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի ԹԻՎ ԹԻՎ 56-Ա, 57-Ն, 58-Ա, 59-Ա, 61-Ա-67-Ա, 69-Ա-81-Ա ԵՎ 84-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 56-Ա որոշման 26-րդ և 27-րդ կետերում գրառված «Հայաստանի հանրապետության շիրակի մարզի արթիկի համայնքապետարանին»,«վարդան մակեյանին» բաղադրյալ հատուկ անուններում, համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2003 թվականի հունվարի 14-ի N 18-Ն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 1-ին կետի «Ա» և «Բ» ենթակետի և 2-րդ կետի «Բ» ենթակետի, բաղադրյալ անվան միայն առաջին բաղադրիչը պետք է գրառել մեծատառով:

Թիվ 57-Ն որոշման վերնագիրը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջին, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող կամ իրավական ակտի գործողությունը դադարեցնող իրավական ակտի վերնագրում բերվում է միայն փոփոխվող կամ գործողությունը դադարեցվող իրավական ակտի կրճատ անվանումը:

Որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետում գրառված «10000000 մեկ միլիոն» թիվը և բառը չի համապատասխանում բառերով գրառված թվին: Անհրաժեշտ է «10000000» թիվը փոխարինել «1000000» թվով:

Թիվ 58-Ա որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածի դրույթների համարակալումը սխալ է կատարված:

Թիվ թիվ 59-Ա, 61-Ա և 63-Ա որոշումների 1-ին կետերում համայնքի ղեկավարի պաշտոնը թերի է գրառված:

Թիվ թիվ 61-Ա և 63-Ա որոշումների 3-րդ կետերը, թիվ 64-Ա որոշման 4-րդ, թիվ 67-Ա որոշման 3-րդ կետերը թերի են գրառված:

Թիվ թիվ 61-Ա, 63-Ա և 67-Ա որոշումներում նշված չեն գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով կառուցապատողներին օտարվող ինքնակամ շինությունների վաճառքի գները:

Թիվ 62-Ա որոշման նախաբանում անհրաժեշտ էր հղում կատարել նաև ՀՀ հողային օրենսգրքի համապատասխան դրույթներին:

Որոշումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջին, համաձայն որի՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու դեպքում որոշման մեջ պետք է նշվեն օգտագործման տրամադրման ժամկետը և վճարի չափը:

Թիվ 65-Ա որոշման նախաբանում հղումը պետք է կատարվեր «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի ոչ թե 20-րդ, այլ՝ 21-րդ կետի դրույթներին:

Թիվ 66-Ա որոշման նախաբանում «11-րդ» թվից հետո նշված «կետով» բառը փոխարինել «մասով» բառով, իսկ «22-Ն որոշման հավելվածը» բառերը՝ «22-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունները» բառերով:

Որոշմամբ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2022 թվականի բյուջեի սոցիալական արտոնություններ բաժնում /այլ դասերին չպատկանող/ նախատեսված գումարից՝ հավելվածի 9-րդ կետում՝ Իգիթ Սամվելի Սարգսյանին հատկացվել է ընդամենը 15000 /տասնհինգ հազար/ դրամ դրամական աջակցություն, սակայն վերջինս չի հանդիսանում ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի բնակիչ: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթի՝ համայնքի բնակիչ է այն անձը, որը հաշվառված է տվյալ համայնքի բնակչության ռեգիստրում: Այսինքն՝ որոշմամբ խախտվել է ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի թիվ 22-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը, այն է՝ աջակցությունից օգտվելու նպատակով համայնքի ղեկավարին կարող են դիմել համայնքի բնակիչները:

Որոշմամբ հաստատված հավելվածի 10-րդ կետում գրառված «Ասոյան» բառը փոխարինել «Աստոյան» բառով:

Թիվ թիվ 69-Ա-80-Ա որոշումների նախաբաններում անհրաժեշտ էր հղում կատարել նաև «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներին: Համայնքի ավագանու կողմից, որպես աճուրդի կազմակերպիչ, չի հաստատվել նշված օրենքով սահմանված աճուրդի կանոնակարգ /հրապարակային սակարկությունների կազմակերպչի սահմանած փաստաթուղթ, որում նախատեսվում են նշված օրենքի համապատասխան կազմակերպչի կողմից սահմանման ենթակա դրույթներ/: Բացի այդ, որոշումների 3-րդ կետերն ավելորդ են:

Թիվ 76-Ա որոշման 2-րդ կետում «յոթանասունվեց» բառից հետո գրառել «հազար» բառը:

Թիվ թիվ 81-Ա և 84-Ա որոշումներն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջին, համաձայն որի՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու դեպքում որոշման մեջ պետք է նշվեն օգտագործման տրամադրման ժամկետը և վճարի չափը:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
16.06.2022թ.